Арм.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР
№ 16129

371
Հ-99

Гос. Публичная Библиотека в Ленинграде

ԼՈՒՍԱՀՐԱՏ

ԵԵՐԵՎԱՆ 1940

17 JUN 2013
43.698

ՀՐԱՄԱՆ № 32

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

15 ՄԱՐՏԻ 1940 Թ.

1.

Հաստատել տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների ստուգողական քննությունների հրահանգը։

2.

Առաջարկել բոլոր ժողկրթության բաժինների վարիչներին և դպրոցների դիրեկտորներին ու վարիչներին ստուգողական քննությունների հրահանգը լայն կերպով մասսայականացնել ուսուցչության, աշակերտության և ծնողների մեջ։

3.

Առաջարկել Դպրոցական Վարչությանը՝ պատրաստել 7-րդ և 10-րդ դասարանների ստուգողական գրավոր աշխատանքների նյութերի տեքստերն ու ժամանակին ապահովել նրանց ստացումը տեղերում։

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմ՝ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

...ԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
...ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1472-87
1 MAR 2010
A рм
2-5908а
371
Z-99

ՀՐԱՀԱՆԳ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Տարեկան փոխադրական և ավարտական ստուգողական քննություններ անց են կացվում Հայկական ԽՍՀ բոլոր դպրոցներում, վորպես աշակերտների գիտելիքների տարեկան հաշվառման յեզրափակման մի ձև։

2. Ստուգողական քննությունները դպրոցներում անց են կացվում աշակերտների փաստական գիտելիքների և նրանց կողմից տարեկան ուսումնական ծրագրի յուրացման աստիճանը հայտնաբերելու նպատակով, մյուս կողմից պարզելու աշակերտների պատրաստականությունը վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների հաջորդ դասարաններում ու մանկավարժական ուսումնարաններում, տեխնիկումներում և բարձրագույն դպրոցներում հաջողությամբ սովորելու համար։

բ. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Ստուգողական քննություններն անց են կացվում տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 4—10 դասարաններում։

Инв. №

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Դպրոցի առաջին, յերկրորդ և յերրորդ դասարաններում քննություններ չեն անցկացվում։ Այդ դասարանների աշակերտները փոխադրվում կամ մնում են նույն դասարանում՝ համաձայն իրենց առաջադիմության տարեկան գնահատականների։

բ) Առաջին և յերկրորդ դասարանների աշակերտներին աշնանային քննություններ չի տրվում։

Յեթե առաջին և յերկրորդ դասարանի աշակերտը տարեվերջին ունի մայրենի լեզվից կամ թվաբանությունից միջակից ցած գնահատական, մնում է նույն դասարանում։

գ) Յերրորդ դասարանի աշակերտներին, մանկավարժական խորհրդի թույլտվությամբ, կարելի յե տալ աշնանային քննություն՝ միայն յերկու հիմնական առարկայից։

Յերկուսից ավելի միջակից ցած գնահատական ունեցող յերրորդ դասարանի աշակերտը մնում է նույն դասարանում։

4. 4-րդ քառորդը վերջանալուց հետո չորս քառորդի գնահատականների հիման վրա՝ աշակերտներին բոլոր առարկաներից դրվում են տարեկան գնահատականներ։

5. Չորրորդ դասարանից սկսած քննության չեն յենթարկվում և մնում են նույն դասարանում այն աշակերտները, վորոնք ունեն 4 և ավելի հիմնական առարկաներից միջակից ցած գնահատական։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բացառություն կարելի յե անել միայն այն աշակերտների նկատմամբ, վորոնց վատ առաջադիմությունը հիվանդության կամ այլ հարգելի պատճառների հետևանք է (որինակ, տեղափոխություն)։ Մանկավարժական խորհրդի վորոշմամբ այդ աշակերտների քննությունները հետաձգվում են աշնանը, ըստ վորում նրանք քննվում են միայն այն առարկաներից, վորից «վատ» գնահատական ունեն։

6. Այն աշակերտները, վորոնք «վատ» գնահատական ունեն քննության վոչ յենթակա առարկաներից, դարնանային քննությունների ընթացքում լրացուցիչ քննության են յենթարկվում այդ առարկաներից։ Լրացուցիչ քննությունները կատարվում են ավյալ դասարանի հիմնական քննություններից անմիջապես հետո՝ 3 որվա ընթացքում։

7. Առանձին դեպքերում վատառողջ յերեխաները, վորոնք տարվա ընթացքում հիմնական առարկաներից «միջակ» գնահատականից վոչ ցած գնահատական են ունեցել, դպրոցական բժշկի կամ համապատասխան պետական բուժհիմնարկի տված վաստակագրերի հիման վրա, դպրոցի մանկավարժական խորհրդի վորոշմամբ, կարող են հաջորդ դասարան փոխադրվել առանց քննության։

Այն դեպքում, յերբ այդպիսի յերեխաները «միջակ»-ից ցած գնահատական ունեն և հնարավորություն չունեն դարնանը քննվելու, պետք է այդ առարկաներից քննության յենթարկվեն աշնանը։

8. Տարրական դպրոցի 4-րդ, վոչ լրիվ միջնակարգ դպրոցի 7-րդ և միջնակարգ դպրոցի 10-րդ ավարտական դասարանների հիվանդ աշակերտների քննությունները կարելի յե մանկավարժական խորհրդի վորոշմամբ հետաձգել աշնանը։ Առանձին դեպքերում, յեթե այդ աշակերտներն ուսումնական տարվա ընթացքում ցույց են տվել լավ առաջադիմություն, կարող են բոլորովին ազատվել քննություններից և ժողկոմբաժինների վարիչների թույլտվությամբ ավարտել դպրոցը, ուսումնական 4 քառորդների գնահատականների հիման վրա, ստանալով համապատասխան վկայական կամ ատեստատ։ Նման բոլոր դեպքերի մասին կոմբաժինների վարիչները պարտավոր են

ժամանակին տեղյակ պահել Լուսժողկոմատի Դպրոցական Վարչությանը։

9. Քննություններն անց են կացվում հետևյալ առարկաներից, հետևյալ ժամկետներում.

4-րդ դասարանում մայրենի լեզվից (գրավոր՝ թելադրություն), ռուսաց լեզվից (բանավոր), թվաբանությունից (գրավոր), ընդամենը 3 քննություն, որից 2 գրավոր և մեկ բանավոր, մայիսի 20-ից—25-ը ներառյալ (6 որացուցային որ)։

(Ռուսական դպրոցներում 2 քննություն)։

5-րդ դասարանում մայրենի լեզվից (գրավոր, բանավոր), ռուսաց լեզվից (բանավոր), թվաբանությունից (գրավոր, բանավոր), աշխարհագրությունից (բանավոր). ընդամենը 6 քննություն, որից 2 գրավոր, 4 բանավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ (13 որացուցային որ)։

(Ռուսական դպրոցներում 5 քննություն)։

6-րդ դասարանում մայրենի լեզվից (գրավոր, բանավոր), ռուսաց լեզվից (բանավոր), հանրահաշվից (բանավոր), բուսաբանությունից (բանավոր), աշխարհագրությունից (բանավոր). ընդամենը 6 քննություն, որից 1 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ (13 որացուցային որ)։

(Ռուսական դպրոցներում 5 քննություն)։

7-րդ դասարանում մայրենի լեզվից ու գրական ընթերցանությունից (գրավոր, բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր՝ թելադրություն, բանավոր), հանրահաշվից (գրավոր), յերկրաչափությունից (բանավոր), ԽՍՀՄ Սահմանադրությունից, ֆիզիկայից, կենդանաբանությունից, աշխարհագրությունից՝ բանավոր, ընդամենը 10 քննություն, որից 3 գրավոր, 7 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 8-ը ներառյալ (19 որացուցային որ)։ (Ռուսական դպրոցներում 8 քննություն)։

8-րդ դասարանում գրականությունից (գրավոր, բանավոր,) ռուսաց լեզվից (գրավոր՝ թելադրություն), ռուսաց լեզվից և գրականությունից (բանավոր), հանրահաշվից (բանավոր), յերկրաչափությունից, մարդու անատոմիայից-ֆիզիոլոգիայից, ֆիզիկայից՝ բանավոր. ընդամենը 8 քննություն, որից 2 գրավոր 6 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (17 որացուցային որ)։ (Ռուսական դպրոցներում 6 քննություն)։

9-րդ դասարանում գրականությունից (գրավոր, բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր՝ թելադրություն), ռուսաց լեզվից և գրականությունից (բանավոր), հանրահաշվից (գրավոր), յերկրաչափությունից, ֆիզիկայից, դարվինիզմի հիմունքներից, քիմիայից ու աշխարհագրությունից՝ բանավոր. ընդամենը 10 քննություն, որից 3 գրավոր, 7 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 10-ը ներառյալ (22 որացուցային որ)։ (Ռուսական դպրոցներում 8 քննություն)։

10-րդ դասարանում գրականությունից (գրավոր, բանավոր), ռուսաց լեզվից ու գրականությունից (գրավոր՝ շարադրություն, բանավոր), հանրահաշվից (գրավոր, բանավոր), յերկրաչափությունից (գրավոր, բանավոր), յեռանկյունաչափությունից, ֆիզիկայից, քիմիայից, ԽՍՀՄ պատմությունից, ռուսաց լեզվից՝ բանավոր. ընդամենը 13 քննություն, որից 4 գրավոր, 9 բանավոր, վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից՝ բանավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառ-

յալ (27 որացուցային օր)։ (Ռուսական դպրոցներում 12 քննություն, աղբբեջանականում՝ 14)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հայկական ու աղբբեջանական դպրոցի 8—10 դասարաններում ուսաց լեզվի ու գրականության բանավոր քննությունները կատարվում են միաժամանակ։

10. Հայկական ԽՍՀ բոլոր դպրոցների 7-րդ և 10-րդ դասարաններում գրավոր քննությունները կատարվում են Լուսժողկոմատի կողմից սահմանված միասնական օրերին։

11. Քննությունների ժամանակ գիտելիքների ստուգումը կատարվում է առարկայի՝ տվյալ դասարանի ծրագրի սահմաններում։

12. Այն դպրոցներում, որտեղ պետական ծրագրերը թերակատարվում են, դիրեկտորները և վարիչները պարտավոր են 4-րդ քառորդի սկզբում այդ մասին հայտնել ժողկրթբաժինների վարիչներին, տալով թերակատարման մասին բացատրություն։

Դպրոցների այդ տեղեկությունների հիման վրա, ժողկրթբաժինների վարիչները պարտավոր են անձամբ դպրոցների դիրեկտորների և վարիչների հետ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները մինչև ուսումնական տարվա վերջը վերացնելու ծրագրերի թերակատարումը։

Բացառիկ դեպքերում, երբ դասարանը ձեռք առած բոլոր միջոցներից հետո լրիվ կերպով չի կատարում ուսումնական ծրագրերը, ժողկրթբաժինների վարիչների թույլտվությամբ ստուգումները կատարել ծրագրով փաստորեն անցած նյութի սահմաններում։

10-րդ դասարաններում ծրագրի թերակատարման դեպքում աշակերտների ավարտումը կարող է թույլատրել միայն անձամբ Լուսժողկոմը։

13. Քննությունների համար վորևե հատուկ ծրագիր չի կազմվում։ Կրկնությունների և քննությունների նախապատրաստման ժամանակ ուսուցիչը ղեկավարվում է միմիայն պետական ծրագրերով ու դասագրքերով։ Այդ ծրագրերը հայտնվում ու պարզաբանվում են աշակերտներին՝ ցույց տալով դասագրքի այն նյութերը, վորոնք պետք է կրկնվեն քննությանը պատրաստվելու համար։

14. Քննություններն անց են կացվում ուսմասվարի կազմած և դիրեկտորի կողմից հաստատված հատուկ դասացուցակով, վորը փակցվում է դպրոցում՝ քննություններն սկսվելուց 10 որ առաջ։

Դասացուցակը կազմելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով.

ա) հայկական ԽՍՀ բոլոր դպրոցներում ստուգողական քննություններն սկսվում են մայիսի 20-ից.

բ) քննություններն անց են կացվում սովորական դասարանական պայմաններում տվյալ դասարանի բոլոր աշակերտների ներկայությամբ.

գ) քննության յենթակա այն առարկաները, վորոնք աշակերտից զգալի լարվածություն են պահանջում, պետք է միջընդմիջ հաջորդեն ավելի հեշտ առարկաների.

դ) հանգստի օրերին քննություններ անցկացնելն արգելվում է.

ե) յուրաքանչյուր գրավոր քննության համար հատկացվում է՝ 4-րդ դասարաններում մեկ դասաժամ, 5—7-րդ դասարաններում—2 դասաժամից վոչ ավելի, 8—10-րդ դասարաններում—3-ից վոչ ավելի։

զ) 4—7 դասարաններում յուրաքանչյուր գ-

առարկայի բանավոր քննություններին ամբողջ դասարանում հատկացվում է որոշ 5 ուսումնական ժամից վոչ ավելի, 8—10-րդ դասարաններում 6 ժամից վոչ ավելի։

Ե) յուրաքանչյուր առարկայի քննությունը (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանա մեկ որում. հարկ լեղած դեպքում բանավոր քննություն կատարելիս կարելի է դասարանը բաժանել յերկու մասի (որինակ՝ դասարանի մի մասը քննվում է առավոտյան ժամը 9-ից, մյուս մասը՝ ցերեկվա ժամը 1-ից).

Ը) դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո—միայն բանավոր քննությունների ժամանակ.

Թ) բանավոր քննության յենթարկված աշակերտները կարող են հեռանալ դասարանից միայն դասամիջոցին, իսկ գրավոր քննությունների ժամանակ աշակերտն աշխատանքը կատարելուց և ուսուցչին հանձնելուց հետո պարտավոր է անմիջապես հեռանալ դասարանից։

15. Բանավոր քննությունները բոլոր դասարաններում կատարվում են տոմսերով։ Տոմսերի մեջ գրվում են դասընթացի ծրագրի տարբեր բաժիններից հավասար դժվարությամբ 2—3 հարցեր (հարցերը խճճողված չպետք է լինեն, այլ աշակերտին հասկանալի և ընթեռնելի գրված)։ Տոմսերում գրվելիք հարցերը կազմվում և գրում է անձամբ տվյալ առարկայի դասատուն ու հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը) կամ ուսմասվարը՝ քննությունից 10 որ առաջ։

Տոմսերը պահվում են դիրեկտորի (վարիչի) մոտ։

16. Յուրաքանչյուր առարկայից տոմսերի քանակը պետք է 3—5-ով ավել լինի տվյալ դասարանի աշակերտների թվից։

Դասարանի աշակերտների թիվը 25-ից պակաս լինելու դեպքում տոմսերի քանակը 30-ից պակաս չպետք է լինի, անկախ աշակերտների թվից։

Տոմսերում պետք է ընդգրկված լինի տվյալ առարկայի ուսումնական ամբողջ ծրագիրը։

17. Քննության ժամանակ տոմսը վերցնում է ինքը՝ աշակերտն անձամբ։ Յեթե նա դժվարանում է պատասխանել առաջին անգամ վերցրած տոմսի հարցերին, նրան իրավունք է վերապահվում վերցնել յերկրորդ տոմսը։

Անհրաժեշտ դեպքում, մասնավորապես յերբ աշակերտը դժվարանում է պատասխանել վերցրած տոմսի հարցերին, այն ժամանակ ուսուցիչը և ասիստենտը տվյալ աշակերտի փաստացի դիտելիքները հայտնաբերում են լրացուցիչ հարցերով։

Այն տոմսը, վորի հարցերին արդեն պատասխանել են աշակերտները նույն դասարանում, կամ յերկու մասի բաժանած դասարանի տվյալ խմբում, յերկրորդ անգամ գործադրել չի թույլատրվում։

18. Մայրենի լեզվից ու գրական ընթերցանությունից գրավոր քննության ժամանակ 4, 5, 6, և 7-րդ դասարաններում տրվում է միայն թելադրություն, իսկ գրականությունից՝ 8, 9, և 10-րդ դասարաններում տրվում է շարադրություն՝ տարվա ընթացքում անցած ծրագրից։

Շարադրության համար առաջարկվում է յերեք թեմա և աշակերտներին իրավունք է վերապահվում ընտրել դրանցից մեկը։

Գրավոր քննությունները գրականությունից 8, 9 և 10-րդ դասարաններում միաժամանակ հանդիսանում են աշակերտների քերականական գիտելիքների և ունակությունների ստուգման միջոց։ Ուղղագրական տեսակետից անբավարար շարադրությունները չեն կարող գնահատվել վորպես «միջակ»։

19. Մաթեմատիկայից գրավոր քննության ժամանակ 4, 5-րդ դասարաններում տրվում է մեկ խնդիր և յերկու վարժություն՝ թվաբանությունից։

7 և 9-րդ դասարաններում—մեկ խնդիր և յերկու վարժություն՝ հանրահաշվից. 10-րդ դասարաններում—մեկ խնդիր և յերկու վարժություն հանրահաշվից ու մեկ խնդիր յերկրաչափությունից՝ յեռանկյունաչափության կիրառումով։

Խնդիրները և վարժությունները տրվում են յերկու վարիանտով, հավասար ստիճանի դժվարությամբ։

20. Թելադրության տեքստերը, գրականությունից շարադրության թեմաները, մաթեմատիկայից խնդիրները և վարժությունները բոլոր դասարանների համար (բացառությամբ 7-րդ դասարանի մայրենի լեզվի գրավոր նյութից ու 10-րդ դասարանների բոլոր գրավոր նյութերից) նախապատրաստվում է տվյալ դասարանի, տվյալ առարկայի դասատուի կողից՝ 3 վարիանտով և հաստատվում դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից՝ քննություններից 5 որ առաջ։ Հաստատված վարիանտները դիրեկտորը հանձնում է ուսուցիչներին՝ անմիջապես քննություններից առաջ։

ԾԱՆՈԹ. Զուգընթաց դասարաններում գրավոր աշխատանքների համար տվրում են տարբեր տեքստեր, խնդիրներ և վարժություններ։

21. 7 և 10-րդ դասարանների գրավորների նյութերը մշակվում և ուղարկվում են Լուսժողկոմատից—փակ ծրարով։

Ժողկոմբաժիններն այդ ծրարները հանձնում են դպրոցների դիրեկտորներին՝ գրավոր քննություններից յերկու որ առաջ։

Դպրոցների դիրեկտորներն այդ ծրարները բաց են անում տվյալ դասատուների ներկայությամբ միայն քննության որը, քննությունից մեկ ժամ առաջ։

ԾԱՆՈԹ.—Յերևան և Լենինական քաղաքների դպրոցների 7-րդ դասարանների գրավոր նյութերը մշակում են և հաստատում քաղաքային ժողկոմության բաժինները։

22. Բոլոր գրավոր աշխատանքներն աշակերտները կատարում են դպրոցի դիրեկցիայի կողմից նախորդ պատրաստած և կնքված թերթիկների վրա։

ԾԱՆՈԹ.—Քննությունների ժամանակ սկզբում անց և կացվում տվյալ առարկայի գրավոր ստուգումը։ Աշակերտների գրավոր աշխատանքները դասատուի և ասիստենտի կողմից պետք է ստուգվեն, գնահատվեն և դպրոցի դիրեկտորին հանձնվեն անպայման նախքան տվյալ առարկայից բանավոր ստուգումների սկսվելը։

23. Քննությունները կատարում է տվյալ առարկայի դասատուն. քննությունների ժամանակ անպայման ներկա յի լինում նույն կամ հարակից առարկայի մի դասատու ևս (ասիստենտ)—դիրեկտորի նշանակումով։ Ասիստենտին իրավունք է վերապահվում աշակերտներին հարցեր տալ և նրա գնահատականները հաշվի յեն առնվում դասատուի կողմից։

ԾԱՆՈԹ.—Քննությունների արդյունքները հայտնվում են մանկավարժական խորհրդի վորոշումից հետո։

Գ. ՔՆՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

24. Միջնակարգ դպրոցների ավարտական՝ 10-րդ դասարանների քննությունները կատարվում են հանձնաժողովների միջոցով, հետևյալ կազմով՝ դպրոցի դիրեկտորը, վորը հանդիսանում է հանձնաժողովի նախագահը, տվյալ առարկայի դասատուն, դիրեկտորի կողմից նշանակված ասիստենտը և ժողկրթբաժի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹ.—ա) Վորպես ժողկրթբաժնի ներկայացուցիչներ հրավիրվում են Համալսարանի պրոֆեսորները և դոցենտները մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների, մանկավարժական ուսումնարանների և այլ միջնակարգ դպրոցների դասատուները, զբոսրոցական հրահանգիչները և մեթոդիստները։

բ) Դպրոցի դիրեկտորը պարտավոր է մինչև քննությունների սկսվելը հանձնաժողովի անդամներին ծանոթացնել տվյալ հրահանգի հետ։

25. Դիտելիքների գնահատման քննարկությանը մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները։ Վերջնական յեզրակացության իրավունքը պատկանում է դպրոցի դիրեկտորին։

Դ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՅԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

26. Աշակերտները փոխադրվում են հաջորդ դասարան կամ դպրոցն ավարտում են այն ժամանակ, յերբ ուսումնական դասընթացի բոլոր առարկաներից միջակից ցածր գնահատական չունեն։

Պայմանական փոխադրումներ չեն թույլատրվում։

ԾԱՆՈԹ.—Նկարչությունից, յերգից և ֆիզկուլտուրայից միջակից ցածր գնահատականները խոչընդոտ չեն հանդիսանում աշակերտին հաջորդ դասարան փոխադրելու համար։

27. Վոչ քննական առարկաների տարեկան—ընդհանուր գնահատականները վորոշվում են ուս. տարվա չորս քառորդների գնահատականների հիման վրա։

28. Քննական առարկաների տարեկան—ընդհանուր գնահատականները վորոշվում են քննական և տարեկան (չորս քառորդի արդյունքի) գնահատականների հիման վրա։

29. Տարեկան-ընդհանուր գնահատականների հիման վրա մանկավարժական խորհուրդը վորոշում է աշակերտի մի դասարանից մյուս դասարան փոխադրվելու կամ դպրոցն ավարտելու հարցը։

30. 4-րդ դասարանից սկսած, յերբ աշակերտը ստուգողական քննություններից հետո քննության յենթակա 1—3 հիմնական առարկաներից միջակից ցածր գնահատական և ստանում, թույլ է տրվում նրան աշնանը քննություն տալու։

31. Ստուգողական քննություններից հետո 4 և ավելի հիմնական առարկաներից (անկախ նրանից՝ քննական են, թե վոչ), միջակից ցածր գնահատական ունեցող աշակերտները մնում են նույն դասարանում։

32. Մայրենի և ռուսաց լեզուներից տարեկան գնահատականներում պետք է նշանակել գրավորից և բանավորից առանձին գնահատականներ։ Մնացած բոլոր առարկաներից տրվում է միայն մի գնահատական։ Լեզուներից ընդհանուր գնահատական գրվում է միայն ատեստատում։

ԾԱՆՈԹ. Եթե աշակերտը լեզվի և՛ գրավորից, և՛ բանավորից ունի «վատ» գնահատական, ապա համարվում է մեկ առարկա «վատ». եթե միայն բանավորից կամ միայն գրավորից է «վատ» դարձյալ հաշվում է մեկ առարկա «վատ»։

33. Ուսումնական տարին ավարտելուց հետո աշակերտին տրվում է՝

ա) ատեստատ (Լուսժողկոմատի սահմանած ձևով)՝ միջնակարգ դպրոցն ավարտողներին,

բ) վկայական՝ տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողներին,

գ) փոխադրման վկայականներ՝ դասարանից-դասարան փոխադրվող բոլոր աշակերտներին,

դ) գովասանագիր, մանկավարժական խորհրդի վորոշմամբ, այն աշակերտներին, վորոնք բոլոր հիմնական առարկաներից և վարքից ունեն գերազանց գնահատական, անկախ նկարչության, յերգեցողության և ֆիզկուլտուրայի գնահատականներից,

յա) միջնակարգ դպրոցն ավարտող այն աշակերտները, վորոնք հիմնական առարկաներից (անկախ նկարչությունից, յերգեցողությունից և ֆիզկուլտուրայից), ու վարքից ունեն գերազանց գնահատական, ստանում են հատուկ ատեստատ, վորն իրավունք է տալիս բարձրագույն դպրոց ընդունվելու առանց քննության։

34. Աշնանային քննությունները կատարվում են ոգոստոսի 20-ից—27-ը ժամանակաշրջանում, առանց տոմսերի՝ կայուն դասատախտակով։

35. Աշնանային քննությունների համար գրավոր աշխատանքների տեքստերը, շարադրության թեմաները, թելադրության տեքստերը, խնդիրներն ու

վարժությունները կազմում են համապատասխան ուսումնական առարկաների դասատուները և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը)։

ԾԱՆՈԹ.— ա) Աշնանային քննությունների կայուն դասացուցակը կազմվում է գարնանը և հայտնվում աշակերտությանը։

բ) Տեղափոխման դեպքում աշնան քննություններն աշակերտները տալիս են այն դպրոցում, ուր տեղավորվում են։

36. Դպրոցների դիրեկտորները (վարիչները) պարտավոր են աշնանային քննություն ունեցող աշակերտներին ցույց տալ կազմակերպված ոգնություն (տրամադրել դպրոցի շենքը, կազմակերպել խմբակային պարապմունքներ և այլն)։

Աշնանային վերաքննություն ստացող յուրաքանչյուր աշակերտին ոգնելու ու պարապատելու վերաբերյալ կոնկրետ միջոցառումները նշվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեղրափակման նիստին, այսինքն գարնանային քննություններից անմիջապես հետո։

37. Աշնանային քննություններից հետո, յերբ աշակերտը ստանում է միջակից ցած գնահատական, նույնիսկ մեկ առարկայից, մնում է նույն դասարանում։

38. Մանկավարժական խորհրդի վորոշումը յուրաքանչյուր աշակերտի մասին հայտնվում է ծնողներին, գարնանային և աշնանային քննություններից անմիջապես հետո։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. ԻՄ. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

յե. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

39. Աշակերտների քննական գրավոր աշխատանքները (թելադրությունները, շարադրությունները, խնդիրները և վարժությունները) պահվում են դպրոցում։

40. Յուրաքանչյուր դասատու իր առարկայից քննությունը վերջացնելուց հետո, հենց նույն որը, նշանակելով աշակերտների դնահատականները, լրացնում է քննության արձանագրությունը և իր ու ասիստենտի ստորագրությամբ հանձնում դիրեկտորին։

41. Ստուգողական քննությունների արդյունքները քննարկվում են և ամփոփվում դպրոցի մանկավարժական խորհրդի յեղրափակման նիստում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Ժողկոթբաժինները քննությունների արդյունքների ամփոփումները ներկայացնում են Լուսժողկոմատի Դպրոցական Վարչությանը։

բ). Կցվում-է քննությունների արձանագրության ձևը։

42. Ստուգողական քննությունների վերաբերյալ վորևե հրահանգի կազմումը տեղերում խստիվ արգելվում է։ Արգելվում է նաև քննությունների արդյունքների մասին վորևե վիճակագրական տեղեկություն պահանջել դպրոցներից։

ԼԺԿ-ի ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հաստատում եմ՝

Դպ. դիրեկտոր _____

« ___ » _____ 1940 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

_____ _____ շրջ. (քաղ.) դպրոցի

դասարանի քննության

(առարկա)

Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը _____

Ասիստենտի ազգանունը, անունը, հայրանունը _____

(10-րդ դասարանների համար գրվում է նաև հանձնաժողովի անդամների ազգանունները)։

№№	Աշակերտի ազգանունը, անունը	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Դասատու _____

Ասիստենտ _____

(X դասարանների համար նաև հանձնաժողովի անդամների ստորագրությունը)

« ___ » _____ 1940 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0231051

Գատ. [illegible]
Սրբագրիչ. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գատվեր № 2, Հր. ատ. պ № 12, Տիրաժ 3000
Գլավլիտի լիազոր Հ—1681
Լուսնրատի տպարան, Յերևան, Տերյան № 127

45. 698

ՀԳԻ

Арм.
2-59082

Ц 1940 г.
Акт № 340
Вкладн. л.